ԴՄԻՏՐԻ ՍՍՐԳՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

ա) ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ - Ուրարտական պետությունում գործել են հարկային գերատեսչություններ և գործակալություններ: Դրանք գործել են ինչպես կենտրոնական Ուրարտուում, այնպես էլ ծայրագավառներում (նվաճված երկրներում):

Հարկային գերատեսչության գլուխ կանգնած էր երկրի արքան: Նա էր որոշում նվաճված երկրների վրա նշանակվող հարկի տեսակներն ու չափերը, ինչպես նաև հարկերը գանձելու ժամկետները:

Տեղերում հարկային գործակալությունները ղեկավարել են երկրի թագավորների կողմից նշանակված «փողի մարդը», «հաշվի մարդը», «ցանքսի մարդը», «ավագ հովիվը», «գինեգործը»: Դրանցից «վաղի մարդը» և «հաշվի մարդը» հարկային գործերի կազմակերպման ղեկավարներն են եղել, իսկ «ցանքսի մարդը», «ավագ հովիվը» և «գինեգործը» օգնել են նրանց հարկերը գանձելու և պահեստավորելու գործում: Ուշագրավ է, որ Ռուսախինիլի քաղաքում (Վան քաղաքի մոտ) «հաշվի մարդու» ղեկավարության տակ աշխատել են 119 հաշվառիչներ[1]: Հավանաբար հարկային գործակալությունները նման բազմանդամ կազմ են ունեցել նաև երկրի մյուս վարչա-տնտեսական կենտրոններում՝ Էրեբունիում, Արգիշթիխինիլիում, Թեյշեբաինիում (Ագա մարգ), Մենուախինիլիում (Յոլակերտի շրջան), Արգիշթիունայում (Այդղի մարգ), Սարդուրիխուրդայում, Ուլխուում (Բարի կամ Սանգիբութու մարգ), Թեյշեբա աստծու քաղաքում (Ուդուրի-Էթիունի՝ Անանի ավազան) և այլն, որոնցում պետության կողմից կառուցվել են հացահատիկի բազմաթիվ ամբարներ վճարվելիք հացահատիկի հարկը ամբարելու նպատակով: Դրանցից հենց Թեյշեբաինիում (Կարմիր - բլուր) հիշատակվում է «հաշվի մարդը»[2], այսինքն՝ այնտեղ գործել է «հաշվի մարդու» գլխավորած հարկային գործակալությունը: Անշուշտ, այդ գործակալության մեջ են մտել Թեյշե-

բանիում հիշատակված «փողի մարդը», «ցանքսի մարդը», «ավագ հովիվը», «գինեգործը»[3], որոնց Ուրարտուի թագավորը դիմել է այնտեղի անասնապահության, ցանքատարածությունների, նրանց տնտեսություններում աշխատող մարդկանց՝ ռազմագերի-ստրուկների, պալատում գտնվող աղջկա, աղջիկ փախցնող ստրուկ Թաթայի հարցերով:

Ուրարտուում բազմազան են եղել հարկ ձեռք բերելու աղբյուրները: Դրանցից են՝

1. Հպատակ (այդ թվում նվաճված) երկրներից ձեռք բերվող հարկը: Այն եղել է երկու տեսակի՝

ա) միանվագ գանձվող հարկ, որը ռազմատուգանքի նշանակություն է ունեցել[4].

բ) ամենամյա գանձվող հարկ (սա եղել է իսկական հարկը)[5]:

2. Ռոզման ջուր տալու պատճառով բնակչությունից ձեռք բերվող հարկը (նման հարկ է Արգիշթի I-ը ձեռք բերել Ազա մարզի բնակչության 3 կատեգորիաներից՝ շելուինիից, ուրբիքսունիից և փուրուանուրդայից)[6]:

3. Մշտական զորքի զինվորներից և համայնականներից գանձվող հարկը (նման հարկի մասին տեղեկություն է պահպանել Սարդուրի II-ը իր տարեգրությունում)[7]:

4. Սեփական մարզերի բնակչությունից գանձվող հարկը (նման հարկի մասին է պատմում Սարգոն II-ը Ուրարտուի կենտրոնական Ուիշդիշ, Սուբի, Բարի կամ Սանգիբութու, Արմարիլի, Այադի, Ուայահս մարզերի հետ կապված)[8]:

Ուրարտական պետության կողմից գանձվում են զանազան տեսակի հարկեր: Այդ տեսակներից են՝

5. Մետաղներ՝ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, բրոնզ, որ ձեռք են բերվել մետաղամշակությամբ զբաղվող երկրներից (Մելիդու (Մալաթիա), Կումախա (Կոմմագենե), Դայաենի-Դիառուխի)[9]:

6. Անասուններ՝ խոշոր եղջերավոր անասուններ, մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ջորիներ, ուղտեր և այլն (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարդուրի II-ի տարեգրությունում և Ուրարտական մյուս թագավորների տեքստերում)[10]:

7. Սննդամթերք՝ հացահատիկ, գինի, յուղ (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարդուրի II-ի տարեգրություններում)[11]:

8. Զենքեր՝ մարտակառքեր, մարտական զենքեր, նետի սլաքներ, նիզակներ (այդ մասին տեղեկություններ են պահպանված Սարդարի II-ի տարեգրությունում)[12]:

9. Հագուստի տեսակներ (նման հարկ է վերցվել Կումախա կամ Կոմմագենե երկրից)[13]:

10. Տնայնագործական կահկարասի՝ գավաթներ (նման հարկ է գանձվել Կումախա կամ Կոմմագենե երկրից)[14] և այլն:

Հարկային գործակալությունները, բացի հարկից, տնօրինել են նաև պե-

տության կողմից ձեռք բերված այլ եկամուտները: Դրանց թվին են պատկանում՝

11. Նվաճված երկրներից ձեռք բերված կողոպուտը,

12. Պետական հողատարածություններից ստացված եկամուտները,

13. Պետական անասնապահությունից ստացված եկամուտները,

14. Պետական արհեստանոցներից (իտսքը գինեգործական, զարդագործական, ջուլհակության, բրուտագործական, մետաղե իրերի (գավաթների) պատրաստման, գինեգործական, գարեջրի մշակման, կաշեգործական արհեստանոցների մասին է) ստացված եկամուտները:

Հարկային գործակալությունները զբաղվում էին նաև արտաքին առևտրի հարցերով: Ուրարտական պետության արտադրանքի որոշ տեսակներ, հատկապես խաղողից ստացված առատ գինին վաճառքի է դուրս բերվել արտաքին շուկա որպես ապրանք և վաճառվել, վախանակվել է այլ ապրանքներով (այդ մասին տեղեկություններ ենք քաղում Խալդի աստծու տաճարի գույքի մասին Սարգոն II-ի 8-րդ տարվա արշավանքին վերաբերվող տեքստից, որտեղ հիշատակվում է, թե այդ տաճարում գտնվել են բազմաթիվ տեսակի օտար ծագում ունեցող իրեր, առարկաներ[15]):

բ) ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ - Ուրարտական պետությունում, որը ունեցել է ռազմա-ստրկատիրական բնույթ, գոյություն են ունեցել սեփականության երեք ձևեր՝

1. պետական, 2. մասնավոր, 3. տաճարային: Ուրարտական իրավունքը, իրավական նորմերը կոչված են եղել ծառայելու իրենց ռազմա-ստրկատիրական պետությանը, նրա սեփականության այդ երեք ձևերին:

Ուրարտուում իրավական նորմերի, օրենքների ժողովածու կամ կոդեքս չի եղել: Դրան վախարինել են թագավորական արձանագրություններն ու տարեգրությունները: Եթե թագավորական արձանագրություններից ամեն մեկը իրենից ներկայացրել է արքայական մի հրամանագիր, ապա տարեգրությունները՝ բազմաթիվ հրամանագրերի ժողովածու կամ կոդեքս:

Ըստ իրենց բնույթի, ուրարտական արձանագրությունները բաժանվել են երեք խմբի՝ 1. շինարարական կամ տնտեսական, 2. ռազմական, 3. կրոնական: Մակայն փաստերը ցույց են տալիս, որ առանձին խումբ են կազմել նաև սոցիալական բնույթի արձանագրությունները: Արձանագրությունների այդ չորս տեսակներից ամեն մեկը ներկայացրել է իր բնույթին համապատասխան իրավական նորմեր:

ա) Շինարարական կամ տնտեսական բնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

1. ուրարտական թագավորների և պետական ռոռգման ցանցից օգտվող համայնականների հարաբերությունների իրավական նորմերը[16],

2. պետական պաշտոնյաներին մասնավոր հողակտոր (այգի) տալու և այդ կապակցությամբ նրանց իրավունքի պաշտպանության վերաբերյալ իրավական նորմերը[17]:

բ) Ռազմական բնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

3. նվաճումների ընթացքում զինվորական վերնախավի համար նախատեսված մասնավոր կողոպուտ և մասնավոր ռազմագերիների ձեռք բերելու իրավական նորմերը[18],

4. ուրարտական թագավորների և նվաճված երկրների թագավորների կամ կառավարիչների վախհարաբերությունների իրավական նորմերը՝ կապված բռնագրավված տարածքների ու նրանց բնակչության, Ուրարտուին հարկ վճարելու, Ուրարտուի գերիշխանությունը ճանաչելու և այլ հարցերի հետ[19],

5. ուրարտական մշտական բանակում ծառայող զինվորներին հարկի տակ գնելու իրավական նորմերը[20]:

գ) Կրոնական բնույթի արձանագրություններում ներկայացվել են՝

6. տաճարներին առևտրի իրավունք տալու իրավական նորմերը[21],

7. ատավածներին զոհեր մատուցելու կարգի մասին իրավական նորմերը[22]:

դ) Սոցիալական բնույթի արձանագրություններում ներկայացվել են այնպիսի իրավական նորմեր, որոնք վերաբերվել են՝ փախչող ստրուկներին իրենց տերերին վերադարձնելուն, պալատում ծառայող խոհարարի (հացթուխի) աղջկա ամուսնությանը, ստրուկ Թաքային և նրա կողմից առևանգված աղջկան, ծերության պատճառով պալատի աշխատանքից ազատված մարդկանց և նրանց ընտանիքի անդամներին հաց տրամադրելուն, համայնականներից գանձվող հարկին և այլն զիջելուն[23]:

Ուրարտուում գործելու են իրավապահ մարմիններ: Դրանք նպատակ են ունեցել նախ և առաջ պաշտպանելու գործող իրավական նորմերը: Իսկ եթե խախտվել են այդ նորմերը, ապա իրավապահ մարմինները ձգտել են վերականգնել դրանք:

Իրավապահ մարմինների գլուխ կանգնած էր երկրի թագավորը: Երկրի իրավական նորմերը նա հաստատում էր իր արքայական արձանագրությունների կամ հրամանագրերի միջոցով: Արքայական այդ արձանագրություններով կամ հրամանագրերով նա սահմանում էր նաև պատիժ (սանկցիա) և պատժի չափեր իրավական նորմերի խախտողների կամ հանցագործների նկատմամբ:

Տեղերում իրավապահ մարմինները ղեկավարել են երկրի թագավորի կողմից նշանակված «կնիք բռնողը», «պալատի մարդը (պալատի անձնակազմի պետը)», «գեղջակարգը», «գինեգործը», «ավագ հովիվը»:

Իրավական նորմերի խախտումները եղել են երկու տիպի: Դրանցից մեկը վերաբերվել է բնակչության առօրեական, կենցաղային վտխհարաբերություններին, իսկ մյուսը՝ պետությանը:

ա) Բնակչության առօրեական, կենցաղային վախհարաբերություններին վերաբերվող իրավական նորմերի խախտումները եղել են բազմազան: Այս բնույթի իրավական նորմերի խախտումների դեմ պետությունը պատժի (սանկցիայի) որևէ չափ չի նախատեսել: Նա բավարարվել է միայն նրանով,

որ թույլ տված իրավական նորմերի խախտումները ուղղվեն և նախկին հարաբերությունները վերականգնվեն: Այսպես, օրինակ՝

1. Թագավոր Սարդուրի III-ը հրաման է գրել, որով պահանջել է Ազա մարզում գտնվող Կուղու բնակավայրի գինեգործ Շանեորդուց, որ նա այդ բնակավայրի հողատերեր Խուքային և Կուքուբիլիին վերադարձնի նրանց մոտից փախած երկու ստրուկներին,[24]

2. Թագավոր Ռուսա II-ը հրաման է գրել, որով պահանջել է Ազա մարզի «ավագ հովվից», որպեսզի նա ետ վերադարձնի ստրուկ Թաքայի կողմից առևանգված այն աղջկան, որը պատկանում էր այդ անասնապահական տնտեսության տիրուհուն[25]:

3. Ոմն թագավոր (նրա անունը չի պահպանվել) հրաման է գրել, որով պահանջել է, «Ռուսայի վտքը քաղաքի» «կնիք բռնող» Իշպիլիուկուից, որպեսզի նա այդ քաղաքի «պալատի անձնակազմի պետ» Լուպշուծիին վերադարձնի նրա այգին, որ խլել էր դատական գործով նրա հակառակորդ Ադիաբդին[26]:

Ակներև է, որ բոլոր այս երեք հրամանագրերում պատիժ (սանկցիա) չի նախատեսվել իրավական նորմեր խախտողների նկատմամբ:

բ) Իրավական նորմերի այնպիսի խախտումները, որոնք առնչվել են պետության հետ և կրել են հակապետական բնույթ, նույնպես եղել են բազմազան: Այդպիսի խախտումներից են՝

1. Թագավորական արձանագրությունների կամ հրամանագրերի կոթողների նկատմամբ սեփական երկրի բնակիչների ոտնձգությունները (դրանց ջարդելը, հափշտակելը, հողի մեջ թաղելը, ջրի մեջ գցելը, արևից ծածկելը, տեղափոխելը, մեկ ուրիշին ստիպելը կատարել այդ գործերը, այդ մասին լսողը և միջոց ձեռք չառնողը, այդ կոթողի կառուցումը և նրանում հիշատակված գործողությունները իրեն վերագրողը)[27],

2. Նվաճված երկրների թագավորների կողմից ուրարտական արքայական արձանագրությունների կամ հրամանագրերի պահանջների անտեսումը, այդ պահանջներին հակադրվելը (նրանց դեմ ապստամբելը, պետական հարկից ու տուրքից հրաժարվելը)[28],

3. ուրարտական թագավորների դեմ սեփական երկրի զորահրամանատարների, մարզերի կառավարիչների ապստամբությունները[29],

4. պետական ու տաճարային ունեցվածքի հափշտակությունը[30]:

Նման բնույթի իրավական նորմերի խախտումները դիտվել են որպես հանցանք և դրանց դեմ ուրարտական պետության կողմից նախատեսվել է պատիժ (սանկցիա): Այդ հանցանքների կապակցությամբ երկրի թագավորը պատժի չափեր է նախատեսել իր արքայական արձանագրություններում կամ հրամանագրերում, շատ դեպքերում ամրագրել նրանց վերջնամասերում: Որոշ հետազոտողներ վերջիններիս անվանել են որպես «անեծք» կամ «անեծքի բանաձև»: Իրականում դրանք ոչ թե «անեծք» են, որոնք մարդու սնահավատությունից ծագող անձնական զայրույթի և զգացմունքների վայր-

կենական պոռթկումն են, այլ պետական օրենքի ուժ ստացած չափեր՝ սահմանված երկրի թագավորի կողմից: Ուրարտուում կիրառվել է պատժի ամենաբարձր չափը՝ մահապատիժը: Մահապատիժ է նախատեսվել՝

5. Ինչպես արքայական արձանագրությունները կամ հրամանագրերը փչացնողների, այնպես էլ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ[31],

6. Ինչպես երկրի թագավորի դեմ ապստամբած զորահրամանատարների, մարզերի պետերի, այնպես էլ նրանց կողմնակիցների նկատմամբ[32],

7. Ինչպես պետական ու տաճարային ունեցվածքի հափշտակողների, այնպես էլ նրանց ընտանիքի նկատմամբ[33]:

Ուրարտուում պատժի տարբեր ձևեր են կիրառվել նախօրոք նվաճված, իսկ հետո Ուրարտուի դեմ ապստամբած երկրների թագավորների և նրանց բնակչության նկատմամբ: Ընդ որում, նախօրոք նվաճված, բայց հետո Ուրարտուի դեմ ապստամբած երկրների թագավորների նկատմամբ կիրառել են պատժի հետևյալ ձևերը՝

1. Ուրարտուի թագավորի առջև ծունկի գալը, նրա ոտքերն համբուրելը,[34]

2. Ուրարտուի թագավորին հարկ ու տուրք վճարելը,[35]

3. Ուրարտուի թագավորի կողմից ստրկացվելը,[36]

4. Նրա կողմից ներքինացվելը,[37]

5. Երկրից վտարվելը:[38]

Նախօրոք նվաճված, բայց հետո Ուրարտուի դեմ ապստամբած ժողովրդի նկատմամբ կիրառվել են պատժի հետևյալ ձևերը՝

6. Նրանց ունեցվածքի կողոպուտը,[39]

7. նրանց գերեվարումը՝ մի մասին սպասել, իսկ մյուսին՝ ստրկության քշելը,[40]

8. զանգվածային տեղահանումը,[41]

9. նրանց ամրոցների, քաղաքների և այլ բնակավայրերի հրկիզումը, ավերումը,[42]

10. նրանց երկրի վերածումը ուրարտական մարզի,[43]

11. այդ երկրի վրա ավանդական թագավորի կամ կառավարչի փոխարեն ուրարտական մարզի պետի նշանակումը[44]:

SUMMARY

The Urartian state has a wide net of tax-collecting organization leaded by the king. The cuneiform Urartian texts refer to several important officers who were busy with taxes - "the man of money", "the man of account". "senior herdsman", etc. Taxes were of different types - metals, livestock, agricultural products, armour and weapons, cloths.

Since the Urartian state does not have written laws, all juridical decisions were conducted by the king himself, through his orders and inscriptions. In the provinces the juridical power of the king was conducting by his officials - "man of the seal", "man of the palace", etc.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. УКН, № 280, стк.12.
2. УКН, № 457, лиц. стор., стк. 5.
3. УКН, № № 457 (2), 460 (2), 456 (4), 455 (4).
4. УКН, № 128, BI, стк. 19-22.
5. УКН, № 128, BI, стк. 22-25.
6. УКН, № 142.
7. УКН, № 155, C; Դ. Ն. Սարգսյան, Ուրարտական համայնականների և զինվորականների խավերի փոխհարաբերությունները, նրանցից գանձվող հարկի տեսակները (Լրաբեր Հասարակական Գիտությունների, 1998, 3), էջ 172-177:
8. АВИИУ, № 49 (156-297).
9. УКН, № № 128, BI (19-25), 155, E (36-57), 158 (21-26).
10. УКН, № 155, C; Դ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
11. УКН, № 155, C; Դ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
12. ձխծ, դ 155, C; Դ. Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 172-177:
13. УКН, № 155, E (36-37).
14. УКН, № 155, E (36-57).
15. АВИИУ, № 49 (352-607).
16. УКН, № 142.
17. Դ. Ն. Սարգսյան, Ուրարտուի սոցիալ-տնտեսական հարաբերությունները՝ կապված «Ռուսայի փոքր քաղաքի» և նրա շրջակայքի բնակավայրերի հետ (ԼՀԳ, 1998, 1), էջ 172-173:
18. УКН, № 155, C (34-48).
19. УКН, № 158, и др.
20. УКН, № 155, C; Դ. Ն. Սարգսյան, ԼՀԳ, 1998, 3, էջ 172-177:
21. УКН, № 19, урарт. текст, стк. 1-26: ассир. текст, стк. 1-22.

22. УКН, № 27.
23. УКН, № № 455-457, 460, 155, С и др. Դ. Ն. Սարգսյան. ԼՀԳ, 1998, 1, էջ 175-176; նույնի՝ ԼՀԳ, 1998, 3, էջ 172-177:
24. УКН, № 455.
25. УКН, № 456.
26. Դ. Ն. Սարգսյան, ԼՀԳ, 1998, 1, էջ 172-173:
27. УКН, № 43, стк. 7-14 и др.
28. УКН, № 36, стк. 29-36 и др.
29. АВИИУ, № 50 (13).
30. УКН, № 19, урарт. текст, стк. 26-41, ассир. текст, стк. 33-42.
31. УКН, №20, об. стор., стк. 21-33.
32. АВИИУ, № 50 (13).
33. УКН, № 19, урарт. текст, стк. 26-41, ассир. текст, стк. 33-42.
34. УКН, № 158, стк.21-24.
35. УКН, № 128, BI, стк. 19-25.
36. УКН, № 128, BI, стк. 17-18.
37. УКН, № 128, BI, стк. 48-49.
38. УКН, №265, стк. 2-3.
39. УКН, № 128, BI, стк. 13-14.
40. УКН, № 127, I, стк. 13-14.
41. УКН, № № 127, III, стк. 34-45; 160.
42. УКН, № 128, BI, стк. 6-7.
43. УКН, № 265, стк. 2-6.
44. УКН, № 265, стк. 4.